ԱՐԱԳԱԾՈՏՆ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
ձեռքբերումները 2007-2011 թվականներին

ՀՏԴ 323 (479.25):36
ԳՄԴ 66.3 (2Հ) + 65.9 (2Հ) - 94
Ա 825

Ա 825 **Արագածոտն: Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի ձեռքբերումները 2007-2011 թվականներին.** - Եր.: Տնտես. բարեփոխ. վերլուծական - տեղեկ. կենտրոն, 2012. - 58 էջ:

Սույն գրքույկը ներկայացնում է 2007-2011 թվականներին ՀՀ Արագածոտնի մարզում առավել նկատելի ձեռքբերումները՝ տնտեսության և ենթակառուցվածքների, կրթության, առողջապահության և մշակույթի, բնակարանային ապահովության և հասարակական անվտանգության բնագավառներում, որոնց արդյունքում բարելավվել է քաղաքացիների կենսամակարդակը: Ներկայացված են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերը, որոնց շնորհիվ մարզի տնտեսությունն ու հասարակությունը նշանակալի ձեռքբերումներ են ունեցել:

ՀՏԴ 323 (479.25) : 36
ԳՄԴ 65.3 (2Հ) + 65.9 (2Հ) - 94

ISBN 978-9939-9065-5-3

© Տնտեսական բարեփոխումների վերլուծական - տեղեկատվական կենտրոն, 2012

Կազմին՝ Գևորգ Բաշինջաղյան, Արագած (1911)

Տպագրված է «ՍԱՄԱՐԿ» ՍՊԸ տպագրատանը
Տպաքանակը՝ 3000 օրինակ

Արագածոտն

Հարավային Կովկասի ամենաբարձր լեռան փեշերին փռվել է Արագածոտնը՝ հայոց հինվաուրց օրրաներից մեկը: Աշխարհ, ուր եկեղեցիները նույնքան հին են, որքան քրիստոնեական հավատը հայոց հողում: Աշխարհ, ուր կիկլոպյան բերդեր կային, երբ դեռ չկար պատմությունն ինքը, և ուր անհիշելի ժամանակներում թշնամին՝ վիշապ էր, հերոսը՝ վիշապաքաղ ու սխրանքը հավերժացնող կոթողը՝ վիշապաքար:

Արագածոտնի հողը վերջին հանգրվանն է բոլոր ժամանակների հայոց մեծագույն հանճարի՝ Մեսրոպ Մաշտոցի և հաղթական սկիզբը հայոց նոր պետականության: Շուրջ մեկ դար առաջ, այստեղ՝ Արագածի լանջին, հայ ժողովուրդը հերոսամարտի բովում վերագտավ դարերի ոլորաններում բզկտված իր արժանապատվությունն ու Բաշ-Ապարանի հերոսամարտում հրով ու արյամբ մաքրագործեց իր լինելիության իրավունքը: Արագածի գագաթի հավերժական ճերմակը դեռ բազում

դարեր հայի սերունդներին հիշեցնելու է քանակով բազում ու սպառազեն, սակայն հայի բազկից գետնատարած ոսոխի պարզած սպիտակ դրոշը:

Իր ժամանակի ամենահզոր հրաբխի չորս եղջյուրները երկինք են խոյանում, որպես աստվածակերտ կոթող հայի հավատին, մտքին, ոգուն ու բազկին: Արագածը հավերժական հիշեցում է, որ մեկ հայի ստեղծագործ պոռթկումը գրի ու հավատի ուժով զորու է ազգ պահպանել դարեր շարունակ: Նաև հիշեցում է, որ հայոց միաբան կամքի ժայթքման առջև անհաղթահարելի խոչընդոտներ չկան, որ հայոց հավաքական զորությունը կարող է բանակներ խորտակել, ծվատված երկիրը դարձնել պետություն ու ապագայի խավարից լուսավոր ճակատագիր հունցել սերունդների համար:

Արագածոտնը հաստատուն օջախ է նաև հինավուրց մի ժողովրդի համար, որը Հայաստանում ծնել է բազում տաղանդավոր գիտնականներ

ու արվեստագետներ, պետական գործիչներ ու զորահրամանատարներ, Հայաստանի արժանավոր քաղաքացիներ: Եզդի ժողովրդի զավակներն իրենց քրտինքով են մշակել Հայաստանի արտերն ու հողը պաշտպանել իրենց արյամբ:

Շուրջ մեկ դար առաջ Արագածոտնի լեռներն ու սարավանդները, դաշտերն ու հովիտները նոր տուն ու տանիք են տվեցին Սասունից ու Խութից, Խնուսից ու Էրզրումից, Մուշից ու Բիթլիսից, Տարոնից ու Մանազկերտից, Ալաշկերտից ու Բայազետից, Այնթապից ու Կարսից, Վանից ու Շատախից, Մոկսից ու Գավաշից, Խոյից ու Սալմաստից, ապա նաև բռնի հայաթափված Դիադինից ու Ադրբեջանի քաղաքներից մազապուրծ, մահվան վիհից կյանքի ափին հանգրվանած հազարավոր հայերի: Դարձան օջախ ու համայնք, և բարձրաբերձ լեռան գոգին Սասնա ոգին կրկին զարթնեց: Զարթնեց, որ հարատևի արարելով:

Մարդը

Արագածոտնի մարզում 2002 թվականից սկսած տարեց-տարի **ավելացել է** բնակչության թիվը, ընդ որում, 2002-2011 թվականներին բնակչության թվաքանակի տարեկան փոփոխությունն Արագածոտնի մարզում ավելի բարձր էր, քան միջինը Հայաստանում: Եթե 2002-2011 թվականներին Հանրապետության բնակչությունն աճել է շուրջ երկու տոկոսով, ապա Արագածոտնի բնակչությունը նշված ժամանակահատվածում ավելացել է շուրջ 3.3 տոկոսով:

Բնակչության թվաքանակը Արագածոտնի մարզում (հազար մարդ)



Արագածոտնի մարզում 2002 թվականից ի վեր ծնվածների թվաքանակը տարեց-տարի ավելացել է. նախորդ ժամանակահատվածում ծնունդների թվի նվազումը փոխակերպվել է **աստիճանական աճի**: 2011 թվականին Արագածոտնում ծնվել է մեկ երրորդով ավելի երեխա, քան 2001 թվականին: 2010 թվականին ծնունդների թվի աճի տեմպն Արագածոտնում ամենաբարձրն էր հանրապետությունում:

Արագածոտնի մարզում տարեց-տարի **ավելացել է** նաև ծնունդների թիվը

2010 թվականին հանրապետությունում հազար բնակչի հաշվով ծնվածների ամենամեծ ցուցանիշը Արագածոտնի մարզում էր:





1000 բնակչի հաշվով. 2010 թվականին Արագածոտնում հազար բնակչի հաշվով ծնվել է **70 տոկոսով ավելի երեխա**, քան 2001 թվականին:

2010 թվականին Արագածոտնում հազար բնակչի հաշվով ծնվել է տասը տոկոսով **ավելի** երեխա, քան միջինում հանրապետությունում: 2010 թվականին Արագածոտնի մարզում հազար բնակչի հաշվով ծնվել է ավելի քան 15 երեխա՝ ավելի շատ, քան երբևէ Հայաստանի Հանրապետությունում: Արագածոտնը հանրապետությունում մանկածնության առաջատարն է:

2003 թվականից Արագածոտնում տարեց-տարի **ավելացել է** նաև բնակչության բնական աճը, որը նախորդ ժամանակահատվածում ցավալիորեն նվազում

էր. 2010 թվականին Արագածոտնի մարզում բնակչության բնական աճը երկու անգամ ավելի էր, քան 2002 թվականին: Միայն 2010 թվականին Արագածոտնի մարզում բնակչության բնական աճն **ավելացել է** մեկ հինգերորդով, մինչդեռ բնական աճի ավելացումը Հայաստանի Հանրապետությունում նույն ժամանակահատվածում կազմել է ընդամենը 0.3 տոկոս, իսկ մայրաքաղաք Երևանում բնական աճը նվազել է 0.6 տոկոսով:

2011 թվականին Արագածոտնի մարզում ստեղծվել է երկու երրորդով ավելի ընտանիք, քան 2001 թվականին, ինչն ապագայի և բարեփոխումների հանդեպ քաղաքացիների աճող վստահության լավագույն վկայությունն է:

Ամուսնությունների թիվը Արագածոտնի մարզում (միավոր)



Վերջին տարիներին Արագածոտնի մարզում **նվազել է** նաև ամուսնալուծությունների թիվը, որը նախորդ տասնամյակում աճի միտում ուներ. 2011 թվականին Արագածոտնի մարզում ամուսնալուծությունների թիվը 2006 թվականի համեմատ **նվազել է մեկ քառորդով**:

2011 թվականին Արագածոտնը տասը հազար բնակչի հաշվով ամուսնալուծությունների ցածր ցուցանիշով հանրապետության լավագույն երեք մարզերի թվում էր:



2010 թվականին Արագածոտնի մարզում մեկնողների թվաքանակը 2005 թվականի համեմատ **նվազել է** ավելի քան 70 տոկոսով: Ընդ որում, եթե 2008 թվականին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով հանրապետության տնտեսությանը հասցված շոշափելի վնասի հետևանքով մեկնողների թիվն աճել էր, հետագա տարիներին Արագածոտնից մեկնողների թիվը նկատելիորեն կրճատվել է: Մեկնողների թվով Արագածոտնը հանրապետության երեք ամենաբարվոք մարզերից մեկն է:

Տնտեսության սյուները

Արագածոտնի մարզում 2002 թվականից արդյունաբերական արտադրանքի ծավալի աճի տեմպը կազմել է միջինում **տարեկան ավելի քան 25 տոկոս**, ընդհուպ մինչև 2008 թվականի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը: Վերջինի արդյունքում 2009 թվականին մարզի արդյունաբերական արտադրանքը նախորդ տարվա համեմատ կրճատվել էր շուրջ 5 տոկոսով: Այդուհանդերձ, արդեն 2010 թվականին Արագածոտնի մար-

2011 թվականին արդյունաբերական արտադրանքի ծավալի տարեկան աճի տեմպերով Արագածոտնը հանրապետությունում երկրորդն էր՝ Շիրակից հետո:

զում արդյունաբերական արտադրանքի ծավալի տարեկան աճը կազմել է շուրջ 20 տոկոս, իսկ 2011 թվականին 2010 թվականի համեմատ **ավելացել էր** մեկուկես անգամ:

Արդյունաբերական արտադրանքի ծավալն Արագածոտնի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



2011 թվականին Արագածոտնի մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալն ընթացիկ գներով 2002 թվականի համեմատ ավելի էր քառապատիկ, իսկ նախաճգնաժամային 2007 թվականի համեմատ՝ կրկնապատիկ:

2005 թվականից ի վեր Արագածոտնի մարզում տարեց-տարի նշանակալի տեմպերով **ավելացել է** հանքագործական արդյունաբերության արտադրանքի ծավալը. 2009-2011 թվականներին՝ երեք տարում, Արագածոտնում հանքագործական արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալն ընթացիկ գնե-

2011 թվականին Արագածոտնի մարզում հանքագործական արդյունաբերության արտադրանքի ծավալն ընթացիկ գներով կազմել է 2004 թվականի ավելի քան տասնյոթապատիկը և 2007 թվականի եռապատիկը:

Հանքագործական արդյունաբերության արտադրանքի ծավալն Արագածոտնի մարզում (ընթացիկ գներով, մլն. դրամ)



որով **գերազանցել է** 2001-2008 թվականների՝ ութ տարիների արտադրանքի ծավալն ավելի քան վեց տոկոսով:

2011 թվականին Արագածոտնի մարզում էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ծավալն ընթացիկ գներով 2003 թվականի ծավալի եռապատիկն էր:

Արագածոտնի արդյունաբերության **գլխավոր հզորությունները** մշակող արդյունաբերության արտադրություններն են. 2011 թվականին Արագածոտնի մարզում արդյունաբերական համախառն արտադրանքի ծավալի շուրջ 85 տոկոսը կազմել է մշակող արդյունաբերության արտադրանքը: Արագածոտնի մարզում մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալի աճի տեմպերը շեշտակիորեն բարձրացել են 2007-2011 թվականներին. եթե 2001-2006 թվականներին Արագածոտնի մարզում մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալի աճը կազմել է տարեկան միջինում **25 տոկոս**, ապա 2007-2008 թվականներին՝ **37**, իսկ հետճգնաժամային 2011 թվականին՝ աննախադեպ **60 տոկոս**:

2010 թվականին Արագածոտնի մարզում արտադրվել է ավելի մեծ ծավալով խմիչք, քան հանրապետության հինգ այլ մարզերում միասին:

2010 թվականին Արագածոտնի մարզում է արտադրվել Հայաստանում ոս-

Արդյունաբերության կառուցվածքն Արագածոտնի մարզում, 2011թ.



Մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալն Արագածոտնի մարզում (ընթացիկ գներով, մլն. դրամ)



կերչական արտադրատեսակների ծավալի ավելի քան 27 տոկոսը. Արագածոտնը ոսկերչական արտադրատեսակների արտադրության ծավալով հանրապետությունում երկրորդն է և զիջում է միայն մայրաքաղաք Երևանին: 2010 թվականին Արագածոտնում արտադրված ոսկերչական արտադրատեսակների ծավալը կազմել է Երևանում արտադրված ոսկերչական արտադրատեսակների ծավալի **կեսից ավելին**:

Հանրապետության մարզերում ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրության ծավալով Արագածոտնը **երրորդն է**՝ զիջելով միայն Արմավիրին և Արարատին:

Ոսկերչական արտադրանքի ծավալը ՀՀ մարզերում, 2010թ.



Արմավիրը Հայաստանում **երրորդն է** թղթի և թղթե արտադրատեսակների արտադրության ծավալով՝ Արմավիրի և Արարատի մարզերից հետո, ինչպես նաև քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրության ծավալով՝ Արարատի և Լոռու մարզերից հետո:

Արագածոտնի մարզում 2000 թվականից **ավելացել է** գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը: 2008-2011 թվականներին՝ չորս տարում, Արագածոտնի մարզում գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալն ընթացիկ գներով կազմել է գրեթե նույնքան, որքան դրան նախորդող 2000-2007 թվականներին՝ ութ տարում:

2011 թվականին Արագածոտնի մարզում գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալն ընթացիկ գներով 2001 թվականի համեմատ եռապատիկ ավելի էր:

2007-2010 թվականներին՝ չորս տարում, Արագածոտնի մարզում բուսաբուծության համախառն արտադրանքն ընթացիկ գներով կազմել է նույնքան, որքան նախորդ յոթ տարում՝ 2000-2006 թվկաններին միասին: 2010 թվականին Արագածոտնի մարզում բուսաբուծության համախառն արտադրանքն ընթացիկ գներով կազմել է 2000 թվականի հնգապատիկը:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը Արագածոտնի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



Գյուղատնտեսության համախառն արտադրանքը Արագածոտնի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



2010 թվականին Հայաստանում անասնաբուծության համախառն արտադրանքի ծավալի ավելի քան մեկ տասներորդն արտադրվել է Արագածոտնի մարզում: 2010 թվականին Արագածոտնի մարզում տարեկան արտադրվել է անասնաբուծության **ավելի մեծ** ծավալով արտադրանք, քան նախորդ մեկուկես

2010 թվականին Արագածոտնի մարզում անասնաբուծության համախառն արտադրանքն ընթացիկ գներով 2004 թվականի համեմատ կրկնապատկվել է:

Բուսաբուծության ծավալները Արագածոտնի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



Անասնաբուծության ծավալները Արագածոտնի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



Հայաստանում հացահատիկային և հատիկաընդեղային մշակաբույսերի երրորդ ամենաընդարձակ ցանքատարածություններն Արագածոտնի մարզում են:

տասնամյակում: 2007-2010 թվականներին՝ չորս տարում, Արագածոտնի մարզում արտադրվել է անասնաբուծության **գրեթե նույնքան ծավալով արտադրանք, որքան նախորդ ութ տարիներին**՝ 1999-2006 թվականներին միասին:

Արագածոտնի մարզում են Հայաստանում հացահատիկային և

հատիկաընդեղային մշակաբույսերի ցանքատարածությունների մեկ յոթերորդը: Արագածոտնի մարզում է արտադրվում հանրապետությունում հացահատիկային և հատիկաընդեղային մշակաբույսերի բերքի յուրաքանչյուր յոթերորդ տոննան: 2011 թվականին Արագածոտնի մարզում հացահատիկային և հատիկաընդեղային մշակաբույսերի **բերքն աննախադեպ էր**՝ ավելի քան 60.5 հազար տոննա՝ 2003 թվականի համեմատ՝ կրկնապատիկ ավելի:

Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունները ՀՀ մարզերում, 2011թ.



Բանջարանոցային մշակաբույսերի միջին բերքատվությունը (ց/հա)



1998 թվականից Արագածոտնի մարզում նվազել են բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունները, սակայն **տարեց-տարի ավելացել է**

բերքատվությունը. 2011 թվականին 2000 թվականի համեմատ Արագածոտնի մարզում մշակվել են բանջարանոցային մշակաբույսերի մեկ հինգերորդով պակաս ընդհանուր մակերեսով ցանքատարածություններ, սակայն 2011 թվականին բանջարանոցային մշակաբույսերի բերքն Արագածոտնում 2000 թվականի համեմատ գրեթե **երկուսուկես անգամ ավելի էր**: 2007-2011 թվականներին Արագածոտնի մարզում բանջարանոցային մշակաբույսերի բերքատվությունն **աննախադեպ բարձր էր**:

2011 թվականին Արագածոտնի մարզում բոստանային մշակաբույսերի ցանքատարածություններն **ավելի էին**, քան հանրապետության չորս մարզերում միասին:

Արագածոտնում են հանրապետությունում բոստանային մշակաբույսերի երրորդ ամենամեծ ցանքատարածությունները:

Բոստանային մշակաբույսերի բերքատվությունն Արագածոտնի մարզում **կտրուկ ավելացել է** 2008-2011 թվականներին: Հայաստանի Հանրապետության կառավարության աջակցությունը Արագածոտնի գյուղատնտեսներին այս առումով ևս շոշափելի պտուղներ է տվել: Միայն 2010-2011 թվականներին՝ երկու

2011 թվականին Արագածոտնում ֆերմերները բոստանային մշակաբույսերի մեկ հեկտարից ստացել են տասնապատիկ ավելի բերք, քան 2001 թվականին, քառապատիկ ավելի, քան 2003 թվականին և գրեթե եռապատիկ ավելի, քան 2005 թվականին:

տարում, Արագածոտնի մարզում ստացվել է բոստանային մշակաբույսերի **ավելի շատ համախառն բերք**, քան 1998-2006 թվականներին՝ ինը տարում: Եվ սա այն դեպքում, երբ 1999-2000 թվականներին Արագածոտնի մարզում բոստանային մշակաբույսերի ցանքատարածությունների մակերեսը գերազանցում էր 2010-2011 թվականներին մշակված ցանքատարածությունների մակերեսը:

2010 թվականին Արագածոտնի մարզում պտղի և հատապտղի տնկարկների տարածությունները գրեթե երեք քառորդով ավելի էին, քան 2002 թվականին:

Բոստանային մշակաբույսերի միջին բերքատվությունը (գ/հա)



2010 թվականին Հայաստանում խաղողի տնկարկների երրորդ **ամենաընդարձակ ընդհանուր տարածությունն Արագածոտնի մարզում էր**՝ Արարատյան դաշտավայրից հետո:

2008-2011 թվականներին՝ չորս տարում, Արագածոտնի մարզում ֆերմերները ստացել են խաղողի գրեթե նույնքան բերք, որքան 1998-2005 թվականներին՝ ութ տարում:

2009-2010 թվականներին Արագածոտնի մարզում **կտրուկ ավելացել է խա-**

Խաղողի համախառն բերքը Արագածոտնի մարզում (հազ. տոննա)



ղողի բերքատվությունը: 2010 թվականին Արագածոտնի մարզում ֆերմերները մեկ հեկտարից ստացել են խաղողի **կրկնակի ավելի բերք**, քան 2004 թվականին և մեկուկես անգամ ավելի, քան 2008 թվականին:

2011 թվականին Արագածոտնի մարզում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 2002 թվականի համեմատ ավելացել է շուրջ մեկ քառորդով. 2011 թվականին հանրապետությունում խոշոր եղջերավոր անասունների երրորդ ամենամեծ գլխաքանակը Արագածոտնի մարզում էր:

Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը ՀՀ մարզերում (հազ. գլուխ)



2011 թվականին Արագածոտնի մարզում խոզերի գլխաքանակը 2004 թվականի համեմատ երկուսուկես անգամ ավելի էր:

Հանրապետությունում ոչխարների և այծերի մեծությամբ երկրորդ գլխաքանակն Արագածոտնում է:

2011 թվականին հանրապետությունում իրացված անասունների և թռչնի ավելի քան մեկ տասներորդը բաժին էր ընկնում Արագածոտնին: 2011 թվականին Արագածոտնի մարզում իրացվել է **շուրջ 60 տոկոսով ավելի** անասուն և թռչուն, քան 2002 թվականին:

2011 թվականին Արագածոտնի մարզում արտադրվել է **մեկ երրորդով ավելի** կաթ, քան 2002 թվականին:

Ոչխարների և այծերի գլխաքանակը ՀՀ մարզերում (հազ. գլուխ)



2006-2010 թվականներին Արագածոտնի մարզում հավ-կիթի արտադրությունը եռապատկվել է:

Հավկիթի արտադրության ծավալները Արագածոտնի մարզում (մլն. հատ)



2007-2011 թվականներին Արագածոտնում կատարված կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալի շուրջ մեկ հինգերորդն ուղղվել է մարզում ոռոգման համակարգերի վերականգնմանն ու զարգացմանը:

2007-2011 թվականներին հանրապետության մարզերում ոռոգման համակարգերի վերականգնմանն ուղղված ներդրումային ծրագրերի մեկ վեցերորդը հատկացվել է Արագածոտնի մարզին:

2007-2011 թվականներին Արագածոտնի մարզի **45 գյուղական համայնքներում** հիմնանորոգվել և վերականգնվել են ոռոգման համակարգեր, կառուցվել են երրորդ կարգի ջրանցքներ և խորքային հորեր:

Արզնի-Շամիրամ մայր ջրանցքի **Կարբի** համայնքով անցնող տեղամասում վերականգնվել է շուրջ 25 կիլոմետր երկարությամբ հատված և 75 հիդրոտեխնիկական կառույց: Մինչև 2013 թվականի ավարտը կվերականգնվի Արզնի-Շամիրամի ջրանցքի ևս շուրջ ինը կիլոմետր երկարությամբ հատված:

Նոր Եդեսիա համայնքի 5,300 մետր ընդհանուր երկարություն ունեցող երրորդ կարգի ջրանցքի 2,000 մետր հատվածի վերականգնման արդյունքում ոռոգման ջուր է մատակարարվում համայնքում բնակվող **235 շահառուներին** պատկանող **170 հեկտար** ընդհանուր մակերեսով հողատարածքներին՝ 50 հեկտարով ավելի, քան վերականգումից առաջ:

2011 թվականին **Սասունիկ** համայնքում գործարկվել է **«Արմենիա վայն»** գինու գործարանի 1,400 քառակուսի մետր մակերես զբաղեցնող գետնափոր մառանը: Գործարանի արտադրամասերը հագեցած են գինեգործական ամե-

Ավանդական ու նոր մշակույթը ներդաշնակ են «Արմենիա վայն» գինու գործարանում

նաժամանակակից սարքավորումներով: Գինու պատրաստման եղանակներից ընտրվել է **ֆրանսիական դասական տեխնոլոգիան**: Արտադրությունում ներդրվել են նաև ժամանակակից իտալական և գերմանական ֆիլտրացիոն սարքեր: 2008-2011 թվականներին շահագործման են հանձնվել խաղողի ընդունման կետեր, գինու արտադրամասը, սպիրտի պահոցը, օղու կուպաժը, ինչպես նաև շշալցման արտադրամասերը, կառուցվել է 130 մետր երկարությամբ պետական նշանակության ոռոգման ցանցի ջրագիծ, կառուցվել են կոնյակի սպիրտի թորման շենքը, վարչական շենքը և գոլորշի արտադրող ջերմակայանը, գինու երկու արտադրամաս, 200 քառակուսի մետր տարածք զբաղեցնող գերժամանակակից լաբորատորիա:

2011 թվականին **«Գոլդընն գրեյփ Արմաս»** ընկերությունը Արագածոտնի մարզի շուրջ **180 հեկտար** տարածքում հիմնել է խաղողի աճեցման և մշակման, գինու և կոնյակի արտադրություն, ինչպես նաև ստեղծվել են ագրոտուրիզմի զարգացման ենթակառուցվածքներ: Ցանկապատվել է տարածքը, ձեռք է բերվել 15 միավոր գյուղտեխնիկա, տնկվել է շուրջ **90 հազար խաղողի վազ** և շուրջ **7.5 հազար պտղատու ծառ**: Ընդհանուր առմամբ ներդրվել է 6.2 մլրդ դրամ, ստեղծվել է 80 նոր աշխատատեղ:

2006 թվականից Թալինում գործում է **«Բիոկաթ պլյուս»** ընկերությունը, որ տարեկան մթերում է շուրջ երեք հազար տոննա կաթ ավելի քան **300 գյուղացիական տնտեսություններից,** և արտադրում է շուրջ **200 տոննա պանիր**: Ընկերությունն արտադրում է ավելի քան հինգ տեսակի պանիր՝ ռոկֆոր, լոռի, դիետ պանիր և միջուկով պանիր, որոնք իրացվում են տեղական շուկայում: Ընկերությունն ունի շուրջ 30 աշխատող:

2010 թվականին **Ագարակ** համայնքում **5,3 հազար քառակուսի մետր** տարածքի վրա հիմնվել է ջերմոցային տնտեսություն, որն զբաղվում է վարունգի և լոլիկի արտադրությամբ:

Ֆերմերային տնտեսությունների միավորման եղանակով Արագածոտնի մարզում գործունեություն է ծավալում **«Արուճ»** գյուղատնտեսական ասոցիացիան, որն ընդգրկում է **40 ֆերմերային տնտեսություն**: Ասոցիացիան զբաղվում է պարարտանյութերի, թունանյութերի, դիզելային վառելիքի, սերմերի, տնկան-

Կոշ գյուղի վարչական տարածքում տափաստանային նշանակության հողերից 120 հեկտարի ձեռք բերումը ամերիկահայ գործարար Արմեն Ասլանյանի կողմից սկզբում ապշեցրել էր համայնքապետ Աշոտ Ենգիբարյանին: Գործարարն ասել էր խաղողի այգիներ պիտի դնի, կոնյակի գործարան կառուցի: Հողը վաճառել էին ու սպասել «գնորդի» հետագա գործողություններին: Վեց տարի է անցել այդ օրվանից:

«Տարածքն ամբողջությամբ մաքրեցին քարերից: Էստեղ մեծ ժայռաբեկորներ կային, որ հիդրոմուրճերով են մանրացրել, որ կարողանան տեղափոխել: Այս տարածքում գյուղացիները բազալտի հանք են ունեցել: Անապատային տեղ էր կարելի է ասել, անգամ որպես արոտավայր գյուղացիք չէին օգտագործում, էստեղ մենակ փուշ էր աճում,– պատմում է Կոշի համայնքապետը,– տարածքը գնելուց հետո, սեփականատիրոջ նախաձեռնությամբ մելորացրեցին այն, հարթեցրեցին, վրան բուսահող փռեցին ու դարձրեցին գյուղատնտեսության համար պիտանի»:

Նախկին անապատի տեղում, 75 հեկտարի վրա արդեն չորրորդ տարին է խաղողի վազերն են վեր ձգվում: «Գոլդեն Գրեյփ Արմաս» ընկերությանը պատկանող տարածքում շուտով դռները կբացի նաև կոնյակի-գինու գործարանը: Կազմակերպության ղեկավար Արմեն Ասլանյանի խոսքերով, իրենք հիմնականում կզբաղվեն կոնյակագործությամբ, շատ քիչ քանակությամբ գինի կարտադրեն: «Տարածքում աճում է լավագույն սպիտակահյութ խաղողը, որ մինչև 29 տոկոս շաքարայնություն է ապահովում: Մտադիր ենք նաև չրերի, մուրաբաների, պահածոների արտադրությամբ զբաղվել և դրա համար պտղատու այգիներ ենք հիմնել»,– ասում է Արմեն Ասլանյանը:

Կոշի համայնքապետին այս գործարանի հիմնումն երկու առումով է ուրախացնում՝ անապատը վերածվել է կանաչ գոտու և ստեղծվել են աշխատատեղեր: «150 հոգի աշխատում են այգիներում, բնականաբար հենց գործարանը գործարկվի, աշխատատեղերն էլ կավելանան: Մենակ կոշեցին չէ, է՛ որ աշխատում է, հարակից գյուղերի բնակիչներն էլ են էստեղ աշխատում: Բացի դրանից, գյուղացին էլ չի առնի բերքը վազի Արարատ կամ Արմավիր, կհանձնի տեղում»,– գոհունակություն է հայտնում համայնքապետ Աշոտ Ենգիբարյանը:

«Գոլդեն գրեյփ Արմաս» ընկերության ֆերմենտացման ժամանակակից աշտարակներն ու խաղողի տնկարկները

յութերի ձեռքբերմամբ, իրականացնում է վարկավորում, մշակում է շուրջ **150 հեկտար** հողատարածք, խնամում է **250 գլուխ** խոշոր եղջերավոր կենդանի, **150 մեղվաընտանիք**:

2010-2011 թվականներին **Արտենի** համայնքնում հիմնանորոգվել է գյուղմեքենաների վերանորոգման արհեստանոցը, կառուցվել է մրգերի պահպանման սառնարան: **Ուջան** համայնքում կառուցվել է հացի արտադրամաս: Արագածոտնի **Զարինջա** համայնքին հատկացվել են գյուղմեքենաների անվադողեր, **Ցամաքասար** համայնքին տրամադրվել է կաթնատար շարժակազմ: **Ներքին Բազմաբերդ** համայնքում գյուղատնտեսական կոոպերատիվին տրամադրվել է մեկ տրակտոր: 2011 թվականին Արագածոտնի մարզին ընդհանուր առմամբ տրամադրվել է **10 տրակտոր**:

Միայն 2011 թվականին Արագածոտնի գյուղական համայնքներում ընդհանուր առմամբ տեղադրվել է **25 հակակարկտային կայան**: Աշտարակի տարածաշրջանի 10 համայնքներում գործում է 15 հակակարկտային կայան, որոնցից յուրաքանչյուրն ապահովում է 100 հեկտար տարածքի անվտանգությունը:

2010-2011 թվականներին Արագածոտնի մարզի կաթնամշակման ձեռնարկությունները մարզի ֆերմերներից տարեկան ընդհանուր առմամբ մթերել են **ավելի քան 9,2 հազար տոննա** կաթ:

«Հայասի գրուպ» ալկոհոլային խմիչքների գործարանը Ոսկեվազում

«Գուրմե-Դուրմե» քաղցրեղենի գործարանի արտադրամասն Աշտարակում

«Էս կանալը, որ ըսենց սարքել են է՝ նկարելու ապրանք ա: Ջուրը կողքին ա՝ ծառի բերքը ուրեմն լավ ա: Կջրենք, բերքը կհավաքենք: Կօգտվենք բարիքից»:

Գուրգեն Ավետիսյան, Կարբի համայնքի բնակիչ

2011 թվականին Արագածոտնի մարզի խաղողագործներից մթերվել է **5,5 հազար տոննա** խաղող՝ գրեթե կրկնակի ավելի, քան 2010 թվականին:

2010-2011 թվականներին Արագածոտնի մարզի անհատ և ֆերմերային տնտեսություններին բուսաբուծական և անասնապահական մթերքների արտադրության գործում մեծ աջակցություն է ցուցաբերել **ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկը**, որը 2010-2011 թվականներին տրամադրել է ավելի քան **5,600 գյուղատնտեսական վարկ**՝ շուրջ 4 միլիարդ դրամ ընդհանուր ծավալով:

2010-2011 թվականներին Արագածոտնի մարզի համայնքներն **անվճար** ստացել են **շուրջ հինգ տոննա** ցինկի ֆոսֆիդ՝ ավելի քան 38 հազար հեկտար տարածքների վրա կրծողների դեմ պայքարելու նպատակով:

2010-2011 թվականներին Արագածոտնի մարզում պատվաստվել է ընդհանուր առմամբ **370 հազար գլուխ** խոշոր և մանր եղջերավոր անասուն, շուրջ **50 հազար** թռչուն և ավելի քան **12.5 հազար** փեթակ մեղու:

Արագածոտնի մարզում 2010 թվականին շինարարության ծավալը նախորդ տարվա համեմատ **քառապատկվել է**՝ հանրապետությունում շինարարության ոլորտում տարեկան աճի **երբևէ արձանագրված ամենամեծ թռիչքներից մեկը**: Հատկանշական է, որ 2010 թվականին

Արագածոտնի մարզում 2010 թվականին իրականացված շինարարության ծավալներն ընթացիկ գներով կազմել են 2000 թվականի տասնյոթապատիկը, 2003 թվականի տասնապատիկը և 2007 թվականի հնգապատիկը:

Հայաստանում շինարարության ծավալի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է միջինում ընդամենը մեկուկես տոկոս: 2010 թվականին Արագածոտնի մարզում ընթացիկ գներով իրականացվել են գրեթե նույնքան ծավալի շինարարական աշխատանքներ, որքան 2000 թվականին հանրապետության բոլոր մարզերում միասին:

2010 թվականին հանրապետության մարզերում իրականացված շինարարության համախառն ծավալի **մեկ յոթերորդն իրականացվել է** Արագածոտնի մարզում. 2010 թվականին շինարարության ծավալով Արագածոտնի մարզը հանրապետությունում երրորդն էր:

Շինարարության ծավալները Արագածոտնի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



2010 թվականին Արագածոտնի մարզում գործարկված հիմնական միջոցների ծավալն ընթացիկ գներով 2000 թվականի համեմատ ավելացել է **տասնմեկապատիկ**, 2003 թվականի համեմատ՝ ավելի քան **վեցապատիկ**, իսկ 2008 թվականի համամեմատ՝ ավելի քան **եռապատիկ** անգամ:

2010 թվականին Հայաստանի մարզերում գործարկված հիմնական միջոցների ծավալի գրեթե մեկ հինգերորդը գործարկվել է Արագածոտնում:

2010 թվականին հանրապետության մարզերում գործարկված հիմնական միջոցների ծավալով Արագածոտնը զիջում է միայն Սյունիքին:

Միայն 2010 թվականին՝ մեկ տարում, Արագածոտնի մարզում ընթացիկ գներով գործարկվել են **ավելի մեծ ծավալով** հիմնական միջոցներ, քան նախորդ վեց տարիներին՝ 2004-2009 թվականներին միասին:

Հիմնական միջոցների գործարկման ծավալները Արագածոտնի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



2010 թվականին Արագածոտնում են իրականացվել հանրապետության մարզերում երրորդ ամենամեծ ծավալով շինմոնտաժային աշխատանքները:

2010 թվականին հանրապետության մարզերում շինմոնտաժային աշխատանքների ծավալի մեկ յոթերորդն իրականացվել է Արագածոտնում:

Միայն 2010 թվականին՝ մեկ տարում, Արագածոտնում իրականացել են ընթացիկ գներով **ավելի մեծ ծավալով** շինմոնտաժային աշխատանքներ, քան 1998-2005 թվականներին՝ **ութ տարում միասին**: 2010 թվականին Արագածոտնի մարզում իրականացված շինմոնտաժային աշխատանքների ծավալն ընթացիկ գներով 2001 թվականի ծավալի **տասնվեցապատիկն** էր, 2003 թվականի տասնապատիկը, 2009 թվականի քառապատիկը՝ շինմոնտաժային աշխատանքների ծավալի **աննախադեպ աճ** հանրապետության մյուս մարզերի նկատմամբ:

2010 թվականին Արագածոտնը **երրորդն էր** հանրապետության մարզերում շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսով՝ Շիրակից ու Լոռուց հետո. Հայաստանի մարզերում շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի յուրաքանչյուր ութերորդ քառակուսի մետրը շահագործվել է Արագածոտնում:

Արագածոտնի մարզում շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը (քառ. մ)



2010 թվականին Արագածոտնում շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը հինգ անգամ գերազանցում էր 2000 թվականի նույն ցուցանիշը:

Միայն 2010 թվականին Արագածոտնի մարզում շահագործման է հանձնվել բնակելի շենքերի **ավելի մեծ** ընդհանուր մակերես, **քան նախորդ չորս տարիներին**՝ 2006-2009 թվականներին միասին:

2001-2010 թվականներին Արագածոտնի մարզում է շահագործման հանձնվել հանրապետության մարզերում բնակչության և կազմակերպությունների միջոցներով կառուցված բնակելի շենքերի **ընդհանուր ամենամեծ մակերեսը՝ շուրջ 112 հազար քառակուսի մետր**՝ ավելի, քան հանրապետության չորս մարզերում միասին: Միայն 2010 թվականին բնակչության և կազմակերպությունների միջոցներով Արագածոտնում շահագործման է հանձնվել **ավելի մեծ** ընդհանուր մակերեսով բնակելի շենք, քան 2006-2009 թվականներին՝ չորս տարում: 2010 թվականին հանրապետության մարզերում շահագործման հանձնված բնակելի

շենքերի ընդհանուր մակերեսի ավելի քան 30 տոկոսը շահագործման է հանձնվել Արագածոտնում: 2010 թվականին Արագածոտնի մարզում շահագործման է հանձնվել **3.7 անգամ ավելի մեծ** ընդհանուր մակերեսով բնակելի շենք, քան 2005 թվականին:

2002-2005 թվականներին Արագածոտնի մարզում շահագործման են հանձնվել մի շարք դպրոցներ, ստեղծվել է **1,900 աշակերտական նոր տեղ**՝ նշված ժամանակահատվածում հանրապետությունում շահագործման հանձնված դպրոցների աշակերտական տեղերի մեկ հինգերորդը բաժին է ընկել Արագածոտնին:

ՀՀ մարզերում շահագործման հանձնված հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտական տեղերը, 2001-2010թթ.



Արագածոտնի մարզում 2011 թվականին գործել է մանրածախ առևտրի **երկու անգամ ավելի շատ** օբյեկտ, քան 2003 թվականին: 2011 թվականին Արագածոտնի մարզում գործող մանրածախ առևտրի օբյեկտների թիվը նախաճգնաժամային 2007 թվականի համեմատ **ավելացել է 40 տոկոսով**:

2011 թվականին Արագածոտնի մարզում մանրածախ առևտրի շրջանառությունը նախաճգնաժամային 2007 թվականի համեմատ կրկնապատկվել է՝ հասնելով աննախադեպ 10.4 միլիարդ դրամի:

Առևտրի օբյեկտների քանակը Արագածոտնի մարզում (միավոր)



Մանրածախ առևտրի շրջանառությունն Արագածոտնի մարզում (մլն. դրամ)



Մինչև 2007 թվականը խանութների թիվը Արագածոտնի մարզում հասել է հարյուրի, սակայն 2008 թվականի ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում դրանց թիվը կրճատվել է մեկ վեցերորդով: Այդուհանդերձ, հետագա տարիներին, ճգնաժամի հաղթահարմանը զուգընթաց, Արագածոտնում խանութների թիվը **կրին ավելացել է**՝ գերազանցելով նախաճգնաժամային ցուցանիշը: 2011 թվականին Արագածոտնում գործում էր 134 խանութ՝ **մեկ երրորդով ավելի**, քան նախաճգնաժամային 2007 թվականին և երկու երրորդով ավելի, քան 2000 թվականին:

2011 թվականին Արագածոտնի մարզում խանութների շրջանառությունը 2004 թվականի համեմատ **45 տոկոսով ավելի էր**:

2011 թվականին Արագածոտնի մարզում միջին հաշվով բնակչության մեկ շնչին ընկնող առևտրի շրջանառությունը կրկնակի ավելի էր, քան նախաճգնաժամային 2007 թվականին:

Միջին հաշվով բնակչության մեկ շնչին ընկնող առևտրի շրջանառությունը Արագածոտնի մարզում (դրամ)



Ծառայությունների ծավալը Արագածոտնի մարզում (մլն. դրամ)



2011 թվականին Արագածոտնի մարզում ծառայությունների ծավալը 2004 թվականի համեմատ **ավելացել է քառապատիկ**, իսկ նախաճգնաժամային

2007 թվականի համեմատ՝ **ավելի քան երկուսուկես անգամ**: 2011 թվականին Արագածոտնի մարզում ծառայությունների ծավալը 2009 թվականի համեմատ ավելի էր 30 տոկոսով:

2010 թվականին Արագածոտնի մարզում կրթության ծառայությունների ծավալը 2004 թվականի ծավալի ութապատիկն էր, իսկ 2006 թվականի համեմատ ավելացել էր երեք քառորդով:

Կրթության ոլորտում ծառայությունների ծավալը Արագածոտնի մարզում (մլն. դրամ)



2010 թվականին Արագածոտնի մարզում տեղեկատվության և կապի ծառայությունների ծավալը 2004 թվականի **եռապատիկն էր**: 2010 թվականին՝ մեկ տարում, Արագածոտնի մարզում տեղեկատվության և կապի ծառայությունների ծավալն ավելացել էր **երկուսուկես անգամ**:

Արագածոտնի մարզում 2011 թվականին արատահանման ծավալը 2006 թվականի համեմատ **տասներեքապատիկ**, իսկ նախաճգնաժամային 2007 թվականի համեմատ **յոթապատիկ ավելի էր**:

2007-2011 թվականներին Աշտարակ, Ապարան և Թալին քաղաքներում բացվել են Յունիբանկի և Հայէկոնոմբանկի երեք մասնաճյուղեր, տեղադրվել են 12 ավտոմատ դրամարկղեր:

Թամանյանական Երևանը ապարանցի Վարդան Սարգսյանի ամենասիրած քաղաքն էր: Երազում էր ճարտարապետ դառնալ: Տեսակ-տեսակ շենքեր նախագծելու երազանքն իրականացնելու միակ ճանապարհը բարձրագույն կրթություն ստանալն էր: Երազեց, կրթվեց, սակայն մեկ օր իսկ իր մասնագիտությամբ չաշխատեց, որևէ բան, որպես ճարտարապետ չնախագծեց: 90-ականներն էին, դժվար տարիներ էին, ընտանիք պահելու խնդիր կար: Տան մինուճար զավակն էր, ստիպված էր երազանքները թողնել ինստիտուտի պատերից ներս ու վերադառնալ հայրենի Ապարան: Այդ ժամանակ դեռ չգիտեր, որ շատ տարիներ անց, տներ նախագծելու փոխարեն տորթեր էր «գծագրելու» ու զարդարելու:

Սովորեց հացթուխի արհեստը: Վարդանն ասում է, կյանքը ստիպեց: Սկսեց խմոր հունցելուց՝ հասնելով մինչև վարպետ հացթուխի աստիճանի: 2000 թվականին, երբ Ապարանում սկսեց գործել «Գնթունիք» ընկերության փոքրիկ տաղավարը, ընդունվեց աշխատանքի, որպես վարպետ-հացթուխ: Տարիների հետ փոքրիկ տաղավարը վերածվեց սուպերմարկետի, հացի արտադրամասն էլ ընդլայնվեց ու հիմա, երկու-երեք տեսակի փոխարեն, մինչև քսանհինգ տեսակի հաց են արտադրում:

«Մենք տորթեր էլ ենք թխում, խմորեղենի բազմաթիվ տեսակներ ունենք, բուլկիներ ենք թխում: Տեսականին շատ է: Անում ենք քիչ քանակով ու արագ սպառում ենք,- պատմում է Վարդան Սարգսյանն, ով «Գնթունիք» ընկերությունում ղեկավարում է ամբողջ արտադրական պրոցեսը,- մեր մոտ 24 ժամ բաց է, որ պահին մտնեք, կարող եք թարմ հաց տանել տուն: Վրացական պուրիներ ենք թխում, որի մասնագետին հրավիրել ենք հենց Վրաստանից»:

Քառասունմեկամյա Վարդանը գոհ է իր աշխատանքից ու աշխատավայրից: Արդեն քսան տարի է սննդարդյունաբերության ոլորտում է աշխատում ու երբևէ չի ափսոսացել, որ շենքերի նախագծումն ու դիզայնը փոխարինել է տարատեսակ խմորեղենների, տորթերի ձևավորումով: Ասում է այդ հարցում հենց ստացած կրթությունն է օգնում: Վարդանն ամուսնացած է, ունի երեք երեխա: Մեծ աղջիկն այս տարի ավարտելու է դպրոցն ու պատարաստվում է կրթությունը շարունակել բժշկական համալսարանում:

«Ես ինձ լավ եմ զգում իմ հայրենի քաղաքում: Աշխատում եմ ու կարողանում եմ էս իմ աշխատանքով պահել թե՛ ընտանիքս, թե՛ ծնողներիս: Երբեք չեմ մտածել այլ երկիր տեղափոխվել ապրելու մասին, անգամ էն վատ տարիներին, իսկ հիմա՝ առավել ևս: Մեր արտադրանքը հայտնի է Արագածոտնի մարզում և ոչ միայն, իսկ դա նշանակում է, որ «Գնթունիք»-ն այսօր բրենդ է, թարմության, համի խորհրդանիշ է: Սա մեր բոլորի աշխատանքի արդյունքն է»,— ասում է Վարդան Սարգսյանը:

Արագածոտնի մարզից արտահանման ծավալները (հազ. ԱՄՆ դոլար)



2010 թվականին Արագածոտնի մարզի արտահանման ծավալը գերազանցել է հարևան Թուրքիայի մի շարք սահմանամերձ, այդ թվում՝ Կարս, Թունջելի և Էրզինջան (Երզնկա) նահանգների արտահանման ծավալը:

Ենթակառուցվածքները

Արագածոտնի մարզում, ընդհուպ մինչև 2008 թվականի ֆինանսատնտեսական ճգնաժամը, **ավելացել է** ավտոմոբիլային տրանսպորտի բեռնաշրջանառությունը՝ նախաճգնաժամային 2007 թվականին հասնելով աննախադեպ **7.4 միլիոն տոննա-կիլոմետր** ծավալի: Ճգնաժամի հետևանքով բեռնաշրջանառությունը կրճատվել էր, սակայն արդեն 2009 թվականին բեռնաշրջանառության ծավալը սկսել է վերականգնվել՝ **գերազանցելով** 2006 թվականի ընդհանուր ծավալը:

2007-2011 թվականներին Արագածոտնի մարզում հիմնանորոգվել են միջպե-

2010 թվականին Արագածոտնի մարզում բեռնաշրջանառության ծավալը 2004 թվականի կրկնապատիկն էր:

Բեռնաշրջանառության ծավալները Արագածոտնի մարզում (մլն. տոննա-կմ)



տական մայրուղիներ, հանրապետական և տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ:

2007-2011 թվականներին հիմնանորոգվել են ճանապարհներ՝ **Մաստարա, Լեռնապար, Վարդաբյուր, Ակունք, Ափնագյուղ, Օշական, Օրգով, Ներքին Սասնաշեն, Լեռնարոտ, Սիփան, Բերքառատ, Ծաղկահովիտ, Կարբի, Ոսկեթաս, Կարմրաշեն, Քուչակ, Ղազարավան, Ներքին Բազմաբերդ, Անտառուտ, Ագարակ** համայնքներում, հիվանդանոց տանող փողոցները՝ **Թաթուլ** և **Ապարան** համայնքներում, **Մուղնի - Աշտարակ** ճանապարհը, Ղազար Փարպեցու և Շահազիզի փողոցները՝ **Աշտարակ** քաղաքում, Աշտարակ քաղաքի կամուրջը:

Միայն 2009 թվականին հիմնանորոգվել են **Թալին - Քարակերտ - Թուրքիայի սահման**, **Թալին - Հացաշեն - Ցամաքասար - Շիրակի մարզ, Հոռոմ - Արթիկ - Ալագյազ, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման**՝ դեպի **Արագածոտն** գյուղ, **Արեվան - Եղվարդ - Արագյուղ - Հարթավան** հանրապետական ու միջպետական նշանակության ճանապարհները: Վերանորոգվել է **Վարդենուտի** 3.5 կիլոմետր երկարությամբ ճանապարհը:

2010 թվականին **Արագած** համայնքում բացվել է գերարագ ինտերնետով ապահովված համակարգչային արդիական կենտրոն: Նորաբաց համակարգչա-

յին սրահը համալրվել է 5 համակարգչով, տպիչ/սկաներով, **Օրանժ Արմենիայի** «Flybox» երթուղիչով և հարմարավետ կահավորանքով, որը գյուղի բնակիչներին հնարավորություն է տալիս ոչ միայն կապի մեջ լինել աշխարհի հետ, այլ նաև մասնակցել համակարգչային դասընթացների:



Ժամանակակից տեխնոլոգիաները զարգանում են անհավատալի արագությամբ, և դրանց կիրառումն ամենօրյա կյանքում ոչ միայն հեշտացնում է մարդկանց կյանքը, կրճատում հեռավորությունները մտերիմների միջև, այլ նաև կարող է խթանել հասարակական, մշակութային, գիտական զարգացումը, ապահովել մարդկանց մշտական տեղեկացվածությունը: Կարծում եմ, որ Հայաստանի ոչ միայն մեծ քաղաքներում, այլ նաև փոքր բնակավայրերում շնորհալի մարդիկ պիտի ունենան միևնույն հնարավորությունները: Այս գիտակցությամբ է Orange-ը կառուցել Հայաստանի ամենաընդարձակ գերժամանակակից «3G+» ցանցը, իսկ այս համակարգչային սրահի բացումը մեզ համար հատկապես կարևոր է, որովհետև անմիջապես կապված է մեր հիմնական բիզնես գործունեություն հետ:

Բրունո Դյութուա, Օրանժ Արմենիայի գլխավոր տնօրեն

Ադիտորդ տասնամյակում Արագածոտնի մարզում նշանակալիորեն զարգացել է գազամատակարարման ենթակառուցվածքը. 2011 թվականին Արագածոտնի մարզում գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը 2000 թվականի համեմատ **վեցապատիկ** ավելի էր:

Գազամատակարարման ենթակառուցվածքն Արագածոտնի մարզում հատ-

Գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը Արագածոտնի մարզում (կմ)



Գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը Արագածոտնի մարզի գյուղական վայրերում (կմ)



2002-2011 թվականներին Արագածոտնի գյուղական համայնքներում գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակն ավելացել է տասնմեկապատիկ՝ շուրջ 550-ից հասնելով 6,180-ի:

կապես մեծ թափով **զարգացել է** գյուղական համայնքներում. 2011 թվականին Արագածոտնի գյուղական համայնքներում գազի բաշխիչ գործող ցանցը 2002 թվականի համեմատ շուրջ յոթուկես անգամ, իսկ 2008 թվականի համեմատ՝ **կրկնակի** երկար էր:

Գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակը Արագածոտնի մարզի քաղաքային բնակավայրերում (միավոր)



Եթե 2002 թվականին Արագածոտնի մարզի քաղաքային համայնքներում գազաֆիկացված էր բնակարանների շուրջ 13 տոկոսը միայն, ապա 2011 թվականի տարեսկզբին՝ բնակարանների և բնակելի տների **շուրջ 70 տոկոսը**: 2002 թվականին Արագածոտնի մարզում գազաֆիկացված էր երկու հազարից պակաս բնակարան և բնակելի տուն, սակայն արդեն 2011 թվականի տարեսկզբին դրանց թիվը **յոթապատիկ ավելացել է**՝ հասնելով շուրջ տասնչորս հազարի:

Նախորդ տասնամյակում Արագածոտնի մարզում **նշանակալիորեն ավելացել է** սպառողներին մատակարարված գազի ծավալը. 2010 թվականին Արագածոտնում սպառողներին մատակարարվել է տասնվեց անգամ, իսկ մարզի քաղաքային համայնքներում՝ գրեթե **քսանապատիկ ավելի մեծ ծավալով** բնական գազ, քան 2001 թվականին:

2006-2010 թվականներին Արագածոտնի սպառողներին մատակարարված գազի ծավալը կրկնակի ավելացել է:

Բոլոր սպառողներին բաց թողնված գազը Արագածոտնի մարզում (մլն խմ)



2007-2011 թվականներին հանրապետության մարզերի քաղաքային և գյուղական համայնքներում գազամատակարարման համակարգերի կառուցմանը, վերականգնմանն ու հիմնանորոգմանն ուղղված կապիտալ ներդրումների շուրջ մեկ յոթերորդը **հատկացվել է** Արագածոտնի մարզին:

2007-2011 թվականներին Արագածոտնի մարզի քաղաքային և գյուղական

25 համայնքներում իրականացվել են գազամատակարարման ծավալուն աշխատանքներ:

Արագածոտնի մարզում 2004-2010 թվականներին ջրամատակարարման ցանցում կատարված աշխատանքների և կառավարման ավելի արդյունավետ համակարգերի ներդրման արդյունքում **կրճատվել են** խմելու ջրի կորուստները. 2010 թվականին Արագածոտնի մարզում սպառվել է շուրջ երկու երրորդով պակաս խմելու ջուր, քան 2004 թվականին:

2007-2011 թվականներին Արագածոտնում կատարված կապիտալ ներդրումների յուրաքանչյուր չորրորդ դրամն ուղղվել է մարզի երեք քաղաքային և ավելի քան քառասուն գյուղական համայնքներում ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի կառուցմանն ու հիմնանորոգմանը, ջրագծերի վերանորոգմանը, կարգավորիչ ջրամբարների և ջրավազանների վերակառուցմանը:

Արագածոտնի մարզում 2010 թվականին քաղաքների փողոցների և անցումների ընդհանուր երկարությունը 2001 թվականի համեմատ **ավելացել է** մեկ հինգերորդով: Նույն ժամանակահատվածում Արագա-

Բարեկարգված փողոցների, անցումների և հրապարակների ընդհանուր մակերեսը Արագածոտնի մազրում (քառ. մ)



ծոտնի քաղաքների բարեկարգված փողոցների և անցումների երկարությունն ավելացել է մեկ երրորդով:

2001-2010 թվականներին շուրջ մեկ երրորդով **ավելացել է** Արագածոտնի քաղաքային համայնքներում փողոցների, անցումների և հրապարակների ընդհանուր մակերեսը: Նույն ժամանակահատվածում Արագածոտնի քաղաքների բարեկարգված փողոցների, անցումների և հրապարակների մակերեսն ավելացել է մեկ քառորդով:

2010 թվականին Արագածոտնը հանրապետությունում մեկ բնակչի հաշվով առաջացած թափոնների **ամենափոքր ծավալ ունեցող** մարզերի եռյակում էր: 2010 թվականին Արագածոտնի մարզում մեկ բնակչի հաշվով առաջացած թափոնները 2006 թվականի համեմատ **նվազել են** ավելի քան 40 տոկոսով:

2011 թվականին **Ապարան, Արագած, Քուչակ, Երնջատափ, Հարթավան, Վարդենիս, Լուսագյուղ** համայնքներում տեղադրվել են խաղահրապարակներ, բարեկարգվել է Ապարան քաղաքի հանգստի գոտին:

Տունը

Արագածոտնի մարզում 2011 թվականին բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը 2000 թվականի համեմատ **ավելացել է** շուրջ մեկ հինգերորդով: Նույն ժամանակահատվածում Արագածոտնի քաղաքային համայնքներում բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսն ավելացել է շուրջ 60 տոկոսով:

2011 թվականին Արագածոտնում մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով 2000 թվականի համեմատ **կրկնապատկվել է**, իսկ մարզի քաղաքային համայնքներում նույն ժամանակահատվածում մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով **ավելացել է** գրեթե երեքուկես անգամ:

2011 թվականին Հայաստանի քաղաքային համայնքներում մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով ամենաբարձրն էր Արագածոտնի մարզում՝ ավելի քան 34 քառակուսի մետր:

Քաղաքային և գյուղական բնակավայրերի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսն Արագածոտնի մարզում (հազ. քմ)



Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով Արագածոտնի մարզի քաղաքային բնակավայրերում (քմ)



2011 թվականին Արագածոտնի մարզի քաղաքային բնակավայրերում բազմաբնակարանային շենքերի բնակարանների քանակը 2002 թվականի համեմատ ավելացել է շուրջ հինգ տոկոսով: Նույն ժամանակահատվածում Արագա-

2010 թվականին Արագածոտնի մարզում հողերի, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության, առուվաճառքի գործարքների քանակը 2002 թվականի համեմատ եռապատկվել է:

ծոտնի գյուղական համայնքներում բնակելի տների (առանձնատների) քանակն ավելացել է մեկ հինգերորդով:

2010 թվականին Արագածոտնի մարզում բազմաբնակարան շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2000 թվականի համեմատ **ավելացել է** շուրջ 65 տոկոսով: Նույն ժամանակահատվածում Արագածոտնում բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն ավելացել է **հնգապատիկ**:

2007-2011 թվականներին Արագածոտնի **քաղաքային երեք** և **գյուղական հինգ** համայնքներում բնակարանաշինության նպատակով կատարվել են նկատելի ներդրումներ:

2007-2011 թվականներին **Արագածոտնի Կաքավաձոր, Իրինդ, Արտենի** համայնքներում կառուցվել են բնակելի տներ: **Աշտարակ, Թալին, Ապարան, Արագածավան, Արտենի** համայնքներում կառուցվել կամ հիմնանորոգվել են բազմաբնակարան շենքերի տանիքները, Ծաղկահովիտ համայնքում վերականգնվել է բազմաբնակարան շենք:

Աշխատանքն ու վարձատրությունը

Արագածոտնի մարզում տարեց-տարի ավելացել է աշխատողների վարձատրության մակարդակը: 2010 թվականին Արագածոտնի մարզում աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը 2001 թվականի ավելի քան **հնգապատիկն** էր, 2003 թվականի **եռապատիկը**, իսկ նախաճգնաժամային 2007 թվականի համեմատ՝ **ավելի էր շուրջ մեկ երրորդով**:

Աշխատատեղերի ստեղծման և զբաղվածության աստիճանական ընդլայնման արդյունքում Արագածոտնի մարզում աստիճանաբար **կրճատվել է** չզբաղված, այդ թվում՝ գործազուրկ քաղաքացիների թիվը: 2008 թվականի ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում գործազրկության մակարդակը մարզում աճել էր, սակայն արդեն 2010 թվականին Արագածոտնում վերականգնվել է նախաճգնաժամային միտումը: 2010 թվականին Արագածոտնի

մարզում չզբաղված քաղաքացիների, այդ թվում՝ գործազուրկների թիվը 2004 թվականի համեմատ **նվազել է** ավելի քան մեկ երրորդով:

Տնտեսությունում զբաղված արագածոտնցիների շուրջ երեք քառորդն աշխատում է գյուղատնտեսության, իսկ գրեթե մեկ քառորդը՝ ծառայությունների ոլորտում: 2006-2010 թվականներին Արագածոտնի մարզում բնակչության

Աշխատողների միջին անվանական աշխատավարձը Արագածոտնի մարզում (հազ. դրամ)



զբաղվածության աճը հիմնականում շինարարության ոլորտում նոր աշխատատեղերի ստեղծման արդյունք է. 2006-2010 թվականներին շինարարության մեջ զբաղված արագածոտնցիների թիվն ավելացել է **տասնմեկապատիկ**, իսկ ծառայությունների ոլորտում՝ շուրջ վեց տոկոսով:

Տարեց-տարի ավելացել է զբաղված արագածոտնցիների ներգրավումը տնտեսության ոչ պետական հատվածում. եթե 2002 թվականին Արագածոտնի մարզում ոչ պետական հատվածում աշխատում էր զբաղվածների 85 տոկոսը, ապա 2010 թվականին աշխատում էր արդեն 88 տոկոսը:

2010-2011 թվականներին Արագածոտնի մարզում իրականացվել են մասնագիտական ուսուցման դասընթացներ գործազուրկների համար, արդյունքում 2011 թվականին աշխատանքի է տեղավորվել **ավելի քան 170 գործազուրկ**: 2011 թվականին Արագածոտնի երեք համայնքներում ավելի քան յոթուկես միլիոն դրամ ընդհանուր ծավալով վարձատրվող հասարակական աշխատանքներում ընդգրկվել է ավելի քան 80 քաղաքացի:

Կրթությունը

Արագածոտնի մարզում 2010 թվականին 2003 թվականի համեմատ նախադպրոցական հաստատություններում տեղերի քանակն **ավելացել է** մեկ քառորդով:

Նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների քանակը Արագածոտնի մարզում



2010 թվականին Արագածոտնի մարզում նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների թվաքանակը 2001 թվականի համեմատ ավելացել է մեկ հինգերորդով:

2010 թվականին Արագածոտնի մարզի գյուղական համայնքներում նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների թվաքանակը 2005 թվականի համեմատ կրկնապատկվել է:

2010 թվականին Արագածոտնում մեկ նախադպրոցական հաստատություն միջին հաշվով հաճախել է **կրկնակի ավելի** երեխա, քան 2005 թվականին:

2010 թվականին նախադպրոցական հաստատություններում երեխաների հիվանդացության դեպքերի **նվազագույն ցուցանիշը** Հայաստանում գրանցվել է Արագածոտնի մարզում: 2010 թվականին Արագածոտնի մարզի նախադպ-

ռոցական հաստատություններում երեխաների հիվանդացության դեպքերի քանակը 2004 թվականի համեմատ **նվազել է ութապատիկ**:

2010/2011 ուսումնական տարում Արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցներում դասավանդել է մեկ յոթերորդով **ավելի** շատ մանկավարժ, քան 2004/2005 ուսումնական տարում:

Արագածոտնի մարզում տարեց-տարի **ավելացել է** նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններ ընդունվածների թվաքանակը. 2010 թվականին Արագածոտնի արհեստագործական ուսումնական հաստատություններ ընդունվել է 80 տոկոսով, իսկ ուսուցման վճարովի համակարգում՝ կրկնակի ավելի շատ ուսանող, քան 2008 թվականին:

Նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվածների թվաքանակը ՀՀ մարզերում, 2010թ. (մարդ)



2010 թվականին Արագածոտնի մարզի միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորում էր երկու անգամ ավելի ուսանող, քան 2005 թվականին:

Արագածոտնում, ընդհուպ մինչև 2005 թվականը, նվազել է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների թվաքանակը, որը, սակայն, հետագա տարիներին **հետևողականորեն աճել է**:

Ներսես Աշտարակեցու անվան թիվ
1 նորակառույց դպրոցում

Փոքրիկ աշտարակցիները՝ վերանորոգված
«Մանուշակ» մանկապարտեզում

«Մանկապարտեզը շատ վատ, անմխիթար վիճակում էր: Բայց քաղաքապետարանի միջոցով մենք հասանք մեր նպատակին. մեր մանկապարտեզը բարեկարգվեց և մենք արդեն կաշխատենք շատ լավ պայմաններում»:

Տաթևիկ Ղուկասյան, Աշտարակի «Մանուշակ» մանկապարտեզի տնօրեն

2010 թվականին Արագածոտնի մարզում միջին մասնագիտական հաստատություն ընդունվել է **երկու անգամ ավելի ուսանող**, քան 2006 թվականին: Հատկանշական է, որ ընդունված բոլոր ուսանողները ընդգրկվել են բացառապես ուսուցման վճարովի համակարգում, ինչը վկայում է, որ արագածոտնցիները կարևորում են միջին մասնագիտական կրթությունը:

2007-2011 թվականներին Արագածոտնի մարզում հանրային միջոցների հաշվին կատարված կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալի ավելի քան մեկ հինգերորդն ուղղվել է կրթական հաստատությունների զարգացմանը:

2007-2011 թվականներին Հայաստանում նախադպրոցական հաստատությունների զարգացմանն ուղղված կապիտալ ներդրումների ավելի քան մեկ վեցերորդը հատկացվել է Արագածոտնի մարզին:

2007-2011 թվականներին Արագածոտնի մարզի **քաղաքային երեք** և **գյուղական 53 համայնքներում** կառուցվել, վերակառուցվել և հիմնանորոգվել են քսանհինգ նախադպրոցական, ավելի քան հիսունհինգ հանրակրթական հաստատություններ: Հիմնանորոգվել են **Աշտարակի** և **Թալինի** արհեստագործական ուսումնարանները, Աշտարակի երաժշտական դպրոցը:

2007 թվականին վերանորոգվել է **Աշտարակ** քաղաքի ամենահին նախակրթարանը՝ **«Մանուշակ»** մանկապարտեզը, որտեղ դաստիարակություն են ստանում ավելի քան 150 երեխաներ:

2010-2011 թվականներին Արագածոտնի մարզի դպրոցները ստացել են ավելի քան **220 համակարգիչ**: Համակարգչային դասարան ունի **80 դպրոց**, 70-ը միացած է համացանցին: 2011 թվականին **Թալինի** տարածաշրջանում ինտերնետային կապով ապահովվել է 25 դպրոց: 2010-2011 թվականներին **Երնջատափ** և **Ափնա** համայնքների միջնակարգ դպրոցներում գործել է շարժական ինտերնետային կայան:

2010-2011 թվականներին Արագածոտնի մարզի ավելի քան **20 դպրոց** ջեռուցվել է բնական գազ օգտագործող լոկալ համակարգով, 14 դպրոց ջեռուցվել է հեղուկ վառելիքով, **23 դպրոց**՝ էլեկտրական տաքացուցիչներով, 68-ը՝ վառարանների միջոցով, որոնց համար անհրաժեշտ հեղուկ վառելիքը դպրոցներին տրամադրվել է ժամանակին և անհրաժեշտ քանակով:

2011 թվականին Արագածոտնի **20 հանրակրթական դպրոցներում** և **չորս համայնքներում**, որտեղ չկան մանկապարտեզների շենքեր, բացվել են նախակրթարաններ, գործում են 23 խմբեր, ուր սովորում են շուրջ **500 աշակերտներ**: Նախակրթարաններում դասավանդող ավելի քան 30 մանկավարժներն ունեն համապատասխան մասնագիտական կրթություն:

2011 թվականին Արագածոտնի 27 հանրակրթական դպրոցներում իրականացվել են **«Դպրոցական տաք սնունդ»** և **«Տաք կաթ»** ծրագրերը. առաջինից չորրորդ դասարանների աշակերտներին անվճար մատուցվել է կաթ և թխվածքեղեն: Երեխաներին մատուցվել է բացառապես տեղական արտադրության կաթ, ինչը նպաստել է նաև տեղի անասնապահների արտադրանքի իրացմանը:

Գործում է **Երևան-Աշտարակ** և **Երևան-Թալին** ուսանողների միջքաղաքային փոխադրման երկու ավտոբուս, որոնք օրական կատարում են երկու ուղերթ և տեղափոխում են ավելի քան 55 ուսանող:

Արագածոտնի մարզում գործում է **20 դպրոց ազգային փոքրամասնությունների համար**:

2010-2011 թվականներին Արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցների շուրջ **20 աշակերտներ** արժանացել են առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլի մրցանակների և դիպլոմների, պարգևատրվել են գովասանագրերով:

«Ֆիզկուլտուրան բոլորի համար է: Աշխատանքի, կարգապահության շնորհիվ պատրաստի զինվոր ենք տալիս բանակին: Աղջիկներն էլ լավ մայրեր են դառնում»:

Գագիկ Դավթյան, ֆիզկուլտուրայի ուսուցիչ

Առողջապահությունը

Արագածոտնի մարզում 2004-2010 թվականներին առողջապահական հաստատությունների օպտիմալացման գործընթացին զուգահեռ, բժիշկների թվաքանակն **ավելացել է** հինգ տոկոսով: 2010 թվականին Արագածոտնի մարզում բժիշկների թվաքանակը տաս հազար բնակչի հաշվով 2001 թվականի համեմատ **ավելացել է** գրեթե մեկ երրորդով:

Բժիշկների թվաքանակը Արագածոտնի մարզում (մարդ)



Արագածոտնի մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում տարեց-տարի **ավելացել է** հաճախումների քանակը. 2010 թվականին Արագածոտնում ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում 2006 թվականի համեմատ հաճախումների թիվն ավելացել է շուրջ մեկուկես անգամ:

Նորագույն բժշկական սարքավորումներով հագեցած Ապարանի բժշկական կենտրոնում

Ապարանի բժշկական
կենտրոնի ծննդատանը

Նորակառույց արդիական
ախտորոշման կենտրոն Կոշում

2010 թվականին Արագածոտնի մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում մեկ շնչի հաշվով հաճախումների քանակը 2001 թվականի համեմատ **կրկնապատկվել է**, իսկ 2007 թվականի համեմատ՝ ավելացել է մեկ հինգերորդով:

2007-2011 թվականներին Արագածոտնի **Սասունիկ, Ուջան, Ուշի, Քուչակ, Արտենի** համայնքներում հիմնանորոգվել են առողջության առաջնային պահպանման հաստատությունները:

2011 թվականին բացվել է Ապարանի **հիմնանորոգված բժշկական կենտրոնը**, ուր գործում է լիարժեք վերանորոգված, վերազինված, անհրաժեշտ սարքավորումներով հագեցած հիվանդանոց, որը բնակիչներին բարձր մակարդակով բուժօգնություն ստանալու հնարավորություն է ընձեռել: Հիվանդանոցը հագեցած է որակյալ բուժօգնություն կազմակերպելու համար անհրաժեշտ սարքավորումներով: Արդիականացվել են բժշկական կենտրոնի կառավարման և ղեկավարման կառուցվածքն ու ընթացակարգերը: Բոլոր հիվանդանոցային ու պոլիկլինիկական ծառայությունները, բացառությամբ՝ հակատուբերկուլոզային բաժանմունքի, տեղակայվել են բժշկական կենտոնի հիմնական մասնաշենքում: Բժշկական կենտրոնում աշխատում է շուրջ **40 բժիշկ** և ավելի քան **75 միջին բուժաշխատող**: 2011 թվականին բժշկական կենտրոնին տրամադրվել է ակնաբուժական ժամանակակից սարքավորում, իսկ 2012 թվականին կիրականացվի բուժանձնակազմի վերապատրաստում:

2011 թվականին ավարտվել է **Թալինի** բժշկական կենտրոնի ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության մասնաշենքի երկրորդ հարկի հիմնանորոգումը: Կենտրոնին հատկացվել են բժշկական ֆունկցիոնալ մահճակալներ և գույք:

Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը և Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը ծանոթանում են Ապարանի հիմնանորոգված բժշկական կենտրոնի պայմաններին

2012 թվականին **Կոշ** համայնքում գործարկվել է ժամանակակից դիագնոստիկ կենտրոն, որը տարվա ընթացքում լիարժեքորեն կհագեցվի ժամանակակից սարքավորումներով և գույքով:

Վերանորոգվել է **Աշտարակի** բժշկական կենտրոնի շտապ օգնության տարածքը, ընդունարանը, կանանց կոնսուլտացիայի բաժանմունքը:

2011 թվականին կատարվել է շուրջ **2 հազար հետազոտություն**, այդ թվում՝ ընդհանուր հետազոտություն է անցել շուրջ **1,300 երեխա** և խորացված՝ շուրջ **600 մեծահասակ**: Աչքի շարժական հիվանդանոցում կատարվել է շուրջ 1,000 ակնային հետազոտություն, շուրջ 370 վիրահատություն, լազերային հետազոտություն և բուժում, տրամադրվել է շուրջ 600 ակնոց: Շուրջ 500 երեխաներ Արագածոտնի մարզի ինը դպրոցներում մասնակցել են ակնային խնամքի հանրակրթական հատուկ դասընթացի:

2011 թվականին Արագածոտնի մարզի՝ սանատոր-կուրորտային բուժման կարիք ունեցող շուրջ վեց տասնյակ բնակիչներ ուղեգրվել են հանրապետության առողջարաններ:

Մշակույթն ու սպորտը

Արագածոտնի մարզում 2008 թվականից **ավելացել է** մարզական խմբերի քանակը, որը նախորդ տասնամյակում աստիճանականորեն կրճատվում էր. 2010 թվականին Արագածոտնում գործում էր 30 տոկոսով ավելի շատ մարզական խմբակ, քան 2005 թվականին:

Մարզական խմբերի քանակը Արագածոտնի մարզում (միավոր)



2010 թվականին հանրապետության գյուղական համայնքներում մարզական խմբակների **ավելի քան 13 տոկոսը** գործում էր Արագածոտնի մարզում: 2010 թվականին Արագածոտնի մարզի գյուղական համայնքներում գործել է երկուսուկես անգամ ավելի շատ մարզական խմբակ, քան 2004 թվականին:

2010 թվականին Արագածոտնի մարզում մարզիկների թվաքանակը 2005 թվականի համեմատ 60 տոկոսով ավելի էր:

2010 թվականին Արագածոտնի մարզի գյուղական համայնքներում մարզիկների թիվը 2005 թվականի համեմատ ավելացել է գրեթե **քառակի**:

2007-2011 թվականներին Արագածոտնի մարզում կառուցվել և հիմնանորոգվել են մշակութային և հոգևոր բազմաթիվ հաստատություններ,

Մարզիկների թվաքանակը Արագածոտնի մարզի գյուղական վայրերում (մարդ)



մշակույթի և պատմական հուշարձաններ. Արագածոտնի 114 համայնքներում կան շուրջ 1,**800 պատմամշակութային հուշարձաններ**:

2011 թվականին հիմնանորոգվել է **Աշտարակի Վարդգես Պետրոսյանի անվան մարզային գրադարանը**՝ փոխվել են հատակն ու պատուհանները, նոր

Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցին ամփոփում է հայոց ուսուցչապետի դամբարանը



Թալինի Ս.Աստվածածին բազիլիկ եկեղեցին (XIXդ.) և Թալինի Կաթողիկե եկեղեցին (VIIդ.). կանգուն են դարեր



Ալագյազում հիմնականում զբաղվում են անասնապահությամբ, հողագործությունն այստեղ սահմանափակվում է հացահատիկային կուլտուրաների մշակմամբ: Միջնակարգ դպրոցով հպարտանում են. «Կենտրոն է եղել Ալագյազը կրթության առումով, մեր դպրոցը շատ հայտնի էր դեռ էն ժամանակներում: Ակադեմիկոսներ ունենք, դոկտոր-պրոֆեսորներ, անվանի շատ մարդիկ է տվել Ալագյազը»,– ասում է գյուղի ղեկավար Ազիզ Միոյանը:

Հիսունմեկամյա Ջասմ Հասանի Մախմուդովը ծնվել մեծացել է Արագածի շրջանի Ալագյազ գյուղում: Բարձրագույն կրթությունը ստացել է Երևանում: Ապագա տնտեսագետը մայրաքաղաքից միայն կնոջն է բերել, ում հետ ծանոթացել է ուսանողական տարիներին: Ջասմի կինն ազգությամբ նույնպես եզդի է: Մախմուդովների չորս զավակներն էլ բարձրագույն կրթություն ունեն: «Տղաներիցս երկուսը գիտական կոչում ունեն, մեկը տնտեսագետ է, մյուսը՝ իրավագետ»,– պարծենում է Ջասմը: Ավագ որդիներն ամուսնացած են, հարսներն ազգությամբ եզդի են: Հայերի հետ համերաշխ են ապրում, սակայն խառն ամուսնություններ գրեթե չեն պատահում, թեպետ լինում են և բացառություններ:

Ջասմի հորեղբոր տղայի հարսը հայ է: Ջավադ Մախմուդովի Ռազմիկ անունով տղային հարսանցու ընտրելու նպատակով երկու տարի առաջ խնամախոս էին գնացել Նոյեմբերյան: Մի քիչ չեմ ու չում են արել, բայց հետո համաձայնել են: Ալագյազցի Ռազմիկն ու նոյեմբերյանցի Էլմիրան ամուսնացել են: Հարսանիքի ժամանակ եզդիների մոտ ընդունված ավանդույթը հանուն հայազգի հարսիկի չեն խախտել՝ խնձորով ավանդական հարվածը գլխին Էլմիրան էլ է զգացել:

«Սովորույթների ու ավանդույթների պահպանումը նպաստում է ազգի գոյատևմանը, մենք սրբությամբ պահպանում ենք բոլորը, խնձորով գլխին խփելու ավանդույթն էլ կա, ուղղակի հիմա մի փոքր փոփոխվել է ձևը, դանակով մասերի ենք բաժանում, որ խփելուց փխլվի ու չցավեցնի հարսի գլուխը,– Ջավադ Մախմուդովը ծիծաղում է,– մեր նախնիները դա արել են, որ հարսի խելքը գլխից առնեն, հոր տան ճամփեն մոռանա: Եվայի մեղքի համար են խփում, որ հանկարծ չշշկռվի ու նույն մեղքը չգործի»:

Եզդիաբնակ Ալագյազ գյուղում երեք ընտանիք հայեր են ապրում: Երկրի մեծամասնությունը համարվող ազգի ներկայացուցիչներն այս գյուղում փոքրամասնություն են: «Էս պարագայում մեծամասնությունն եզդիներն են,– կատակում են ալագյազցիները,– ազգային փոքրամասնությունը հայերն են, իսկ եթե վերցնենք ընդհարապես Հայաստանում փոքրամասնություն կազմող այլազգերին, նրանց մեջ եզդիներն էլի մեծամասնություն են»:

Ալագյազցի քսանութամյա Միհրան Դավթյանը ազատ հաղորդակցվում է քրդերեն, ասում է լեզվին նույնչափ լավ է տիրապետում, ինչպես իր մայրենիին: Դպրոցում թե հայ, թե եզդի երեխաները հանրակրթական առարկաներն անցնում են հիմնականում հայերեն լեզվով: «Ծնված օրվանից ես չեմ զգացել, որ այլ ազգի մեջ եմ: Իրանք շատ լավ հայերեն են խոսում, մենք՝ քրդերեն: Ծնված օրվանից երկու լեզուն էլ լսել եմ, համ էլ դպրոցում դասաժամեր կան քրդերեն լեզվով, դպրոցում էլ ենք սովորել: Ուրախություն, թե տխրություն իրար հետ ենք կիսում, երբեք ազգային խնդիրներ մեր գյուղում չեն առաջացել»,– ասում է Միհրանը:

սանհանգույց և ջեռուցման համակարգ է անցկացվել: Գրապահոցներն ապահովված են բավարար ջերմային և լուսային պայմաններով: Նոր պայմաններում շուրջ **70 հազար կտոր** գրականությունը դեռ երկար կծառայի ընթերցողներին, որոնց թվաքանակը գերազանցում է **3,3 հազարը**՝ հիմնականում աշակերտներ ու ուսանողներ, ովքեր գեղարվեստական գրքերից բացի, գրադարանում հաճախ գտնում են մասնագիտական շատ կարևոր և դժվար ձեռքբերվող գրականություն: Ընթերցողների տրամադրության տակ է նաև գրադարանի համակարգչային ծառայությունը՝ համացանցային կապով:

2011 թվականին **Ապարան** քաղաքում բացվեց **հիմնանորոգված** մշակույթի տունը: Կենտրոնում անվճար գործում են տարբեր խմբակներ, տեղակայված է պատմության թանգարանը, պատանի ստեղծագործողների կենտրոնը:

2008 թվականին Արագածոտնի մարզի 4-րդ դարի **Սուրբ Խաչ եկեղեցում**՝ Քասախի բազիլիկում, որի խորանում ըստ ավանդույթի պահվում է սուրբ պսակի մի մասունք, կառուցվեց ջեռուցման համակարգ: Նախկինում Արագածոտնի ցրտաշունչ ձմեռները ժամանակավորապես դադարեցնում էին եկեղեցու գործունեությունը: Այժմ արդեն, հոգևոր ու պատմամշակութային կոթողը գործում է տարին բոլոր:

2007-2011 թվականներին նորոգվել է **Իրինդիի Սուրբ Աստվածածին եկեղեցին**, **Սուրբ Աստվածածին եկեղեցին Ավան համայնքում, Հարթավանի Աստվածընկալ վանքը, Ոսկեվազի Սուրբ Հովհաննես եկեղեցին**:

2007-2011 թվականներին Արագածոտնի մարզում վերանորոգվել և գույքով համալրվել են մշակույթի տներ **Եղիպատրուշ, Օշական, Արտենի, Կաթնաղբյուր, Վերին Բազմաբերդ, Աղձք, Սասունիկ, Բյուրական, Արագած, Չքնաղ** և **Ուջան** համայնքներում: Համայնքային կենտրոններ են կառուցվել կամ վերակառուցվել **Նոր Եդեսիա, Լեռնապար, Իրինդ** և **Երնջատափ** համայնքներում: Աշտարակ քաղաքում կանգնեցվել է **Ներսես Աշտարակեցու հուշարձանը**, հիմնանորոգվել **Պերճ Պռոշյանի տուն թանգարանը**:

2007 թվականին Արագածոտնի մարզում տեղի է ունեցել **«Ռակու 2007»**

Աշտարակի մարզային գրադարանի առօրյան



Մեսրոպ Մաշտոցի արձանն Օշականում

երիտասարդական սիմպոզիումը՝ ուղղված Հայաստանում կերամիկական արվեստի հարուստ մշակույթի վերականգնմանը:

2009 թվականին Արագածոտնի մարզի **Արագած** համայնքը նվաճել է **«Լավագույն գյուղական մարզական համայնք»** մրցանակը:

Արագածոտնցի **Լիլիթ Մկրտչյանը** շախմատի միջազգային կարգի գրոսմայստեր է, մասնակցել է բազմաթիվ միջազգային մրցումների, դարձել հաղթող և մրցանակակիր:

Սոցիալական վիճակը

Արագածոտնի մարզում տարեց-տարի **նվազել է** նպաստառու ընտանիքների թիվը. 2000-2010 թվականներին՝ տաս տարում նպաստառու ընտանիքների թիվը Արագածոտնում **նվազել է ավելի քան 60 տո-**

2011 թվականին Արագածոտնի մարզում տասը հազար բնակչի հաշվով գրանցվել է 40 տոկոսով ավելի քիչ հանցագործություն, քան միջինը հանրապետությունում և գրեթե կրկնակի պակաս, քան հարևան Վրաստանում:

Նպաստառու ընտանիքների քանակն Արագածոտնի մարզում (հազար ընտանիք)



կոսով: 2010 թվականին Արագածոտնի մարզում նախաճգնաժամային 2007 թվականի համեմատ նպաստառու ընտանիքների թիվը նվազել է ավելի քան մեկ հինգերորդով:

2011 թվականին ԽՍՀՄ խնայբանկում ունեցած ավանդների դիմաց փոխհատուցում է տրվել շուրջ **350 ընտանիքի**:

2011 թվականին Արագածոտնի մարզի զոհված ու վիրավոր ազատամարտիկների, բազմազավակ և սոցիալապես անապահով ընտանիքների **200 երեխաներ** ամառային հանգիստն անց են կացրել Ծաղկաձորի «Աղբյուր» ճամբարում:

2012 թվականի տարեսկզբին Արագածոտնի մարզի շուրջ **60 համայնքների** տեղական ինքնակառավարման մարմիններն ունեն ժամանակակից պահանջներին բավարարող համակարգիչներ, գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ համակարգչային ծրագրեր, իսկ 25-ը՝ միացված են համացանցին:

Վանդությունն ասում է, որ երբ Գրիգոր Լուսավորիչն աղոթում էր Արագածի գագաթին, հայոց առաջին հայրապետի հայացքին բացվում է երկնքից անպարան կախված մի մշտավառ կանթեղ: Տասնյոթ դար շարունակ ժողովուրդը կանթեղն այդ համարել է հայոց հույսի, հայ մարդու երազանքի խորհրդանիշ և հավատացել, որ կանթեղն այժմ էլ կա՝ իր տեղում է և տեսանելի է միայն արժանավորներին: Իսկ արժանավորների պակաս հայոց հողը չի ունեցել երբեք և չունի այժմ: Օրհասի ու փորձության ժամին, իմաստավորման ու արարման ժամին հայոց սերմը ծնել է բազում արժանավոր զավակներ:

Երկրորդ աշխարհամարտի ամենաթեժ օրերին, երբ վճռվում էր աշխարհի ժողովուրդների ապագան, երբ ճակատագրի նժարները դեռ տատանվում էին խավարի ու լույսի միջև, երբ հարյուր հազարավոր հայեր նացիզմի դեմ պայքարում սեփական կյանքով էին վճարում մարդկային քաղաքակրթության գոյության իրավունքի համար, երբ Արաքսից անդին կրկին ատամներն էր կրճտացնում դարավոր ոսոխը, Բեռլինի գրավումից երեք տարի և Ստալինգրադի բախտորոշ ճակատամարտից ամիսներ առաջ՝ 1942 թվականի ամռանը, երկու հայ եղբայրներ Արագած լեռան վրա հիմնադրում էին տիեզերական ճառագայթների՝ աշխարհում ամենաառաջին բարձրլեռնային կայաններից մեկը՝ առաջինը Խորհրդային Միությունում: Լուսավոր ապագայի և մարդկային ստեղծագործ հարատևության հանդեպ մեծ հավատը պատերազմի թոհուբոհի մեջ ծնեց գիտական մի կենտրոն, ուր մարդկության համար կարևորագույն հայտնագործություններ արվեցին, և որը Հայաստանում

գիտական մտքի ծաղկման գարունը դարձավ: Այստեղ՝ Արագածի գոգին, բնությունը մարդու առջև բազմաթիվ գաղտնիքներ բացեց տիեզերական ճառագայթների էության մասին: Եվ պատերազմի ավարտից անմիջապես հետո, քայքայված տնտեսության ու համատարած աղքատության պայմաններում, կիսասոված ու արնաքամ Հայաստանում, մեծանուն հայորդու ջանքերով Արագածի փեշին աստղադիտարանի հիմնումն այլևս ոչ մեկին տարօրինակ չթվաց:

Մեծ գիտության շռնդալից մուտքը Հայաստան սկսվեց այստեղ՝ Արագածոտնում, ուր հայն ամենամոտն է արևին ու Արարչին: Արագածի լանջերին հայ մեծանուն գիտնականների ու մտավորականների ցանած ստեղծագործ մտքի սերմերը, գիտելիքի ու գիտության հանդեպ նրանց սերը, Հայաստանում գիտության մեծ ապագայի հանդեպ նրանց հավատը և գործընկերների ուժերի հանդեպ վստահությունը բազում պտուղներ են տվել ու դեռ պիտի տան: Արագածոտնում, Բյուրականի աստղադիտարանի կամարների տակ, մարդու հանճարը հայտնագործեց աստղասփյուռները և առաջին անգամ ապացուցվեց, որ մեր օրերում ևս շարունակվում են աստղեր ու գալակտիկաներ ծնվել: Արագածի լանջին հայը հեղաշրջեց աստղաֆիզիկայում իշխող պատկերացումները:

Տիեզերքի գաղտնիքներն անսպառ են, իսկ Արագածի լանջերը գրկաբաց սպասում են այդ գաղտնիքները բանալու կարողությամբ, կամքով ու հավատով զինված հայ հանճարներին: Նրանց, ում ճանապարհը լուսավորում է մշտավառ կանթեղը: Նրանց, ով փնտրում է լուսե կանթեղը և հավատում դրա գոյությանն ու խորհրդին:

Սույն գրքույկը ներկայացնում է 2007-2011 թվականներին ՀՀ Արագածոտնի մարզում առավել նկատելի ձեռքբերումները տնտեսության և ենթակառուցվածքների, կրթության, առողջապահության և մշակույթի, բնակարանային ապահովության և հասարակական անվտանգության բնագավառներում, որոնց արդյունքում բարելավվել է քաղաքացիների կենսամակարդակը: Գրքույկը ներկայացնում է նշված ժամանակահատվածում Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման համար խիստ բացասական հետևանքներ թողած համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամի հաղթահարման ընթացքն ու արդյունքները: Ներկայացված են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերն ու դրանց արդյունքները՝ ուղղված հանրային և մասնավոր հատվածների, հասարակական և բարեսիրական կառույցների, ինչպես նաև զարգացման միջազգային գործընկերների՝ ճգնաժամի պայմաններում սուղ միջոցների և մասնատված ուժերի համախմբանն ու արդյունավետ օգտագործմանը՝ ի շահ Արագածոտնի մարզի տնտեսության և բնակիչների: Գրքույկի գլխավոր հերոսը արագածոտնցին է, ում ստեղծագործ ուժն ու եռանդը, լավատեսությունը, դրական փոփոխությունների հանդեպ հավատն ու դրանց հասնելու վստահությունը հնարավոր են դարձրել այն բոլոր ձեռքբերումները, որոնք ներկայացված են գրքույկում:

Երևան - 2012